

ԿՐԹՆԱԿԱՆ

ԱՒԵՏԱՐԱՆԻ ԵՒ ԱՇԽԱՐՀԻ ՍԵՐՈ

Այս է պատուէր իմ, զի սիրեցիք զմիմեանս, որպէս և ես պէտք սիրեցի։ Մեծ ևս քան զայս սէր ոչ ոք ունի, եթէ զանձն իւր զիցէ ի վերայ բարեկամաց իւրոց։ Գուք բարեկամք իմ էք՝ եթէ տունիցէք զոր ևսն պատուիրեմ ձեզ։

Աւետ. Յովնանու 12—15 զլուիս Ժ. Ե։

Անցեալ սեպտեմբերի համարում մենք խօսեցինք Աւետարանի և մեր քրիստոնէութեան մասին և խոստացանք ցոյց տալ, թէ ինչպէս այդ ս. Մատենից երես դարձնելու կամ չուսումնասիրելու շնորհիւ մենք՝ փոխանակ բարձրանալու՝ ընկնում ենք։ Մշակը շտապել էր յայտարարել, որ մենք ողբում ենք կրօնական զգացման թուլանալը, որ մենք էլ լալկան ենք դարձել, որ հարց է, թէ ինչ չափով հարկաւոր է հայերին այդ աւելորդ բեռը. բայց գտել էր, որ դրա մասին այժմ չի կարելի խօսել։ Վերջում իբրև Արարատի լեզուական թերութիւն՝ բերել էր մեր յօդուածից մի պարբերութիւն, որն ընդարձակ էր մի միայն ուժգնութեան համար և լեզուական օրէնքների երբէք դէմ չեր։ Ճիշտ է, եթէ յանկարծ անյայտանայ, կամ մի հրաշքով կորցնենք մեր լեզուն ու դրականութիւնը, դժուար չի լինիլ վերականգնել այն Մշակի հեռագիրների այս տարուայ աննման հայերէնով, բայց ինչ և իցէ՝ լրագրական բանակուիլ չէ մեր նպատակը, ուստի և կանցնենք բուն խնդրին։

Ինչո՞ւ համար է հարկաւոր մեզ Աւետարանը, քրիս-

տոնէութեան ըուն աղբիւրի հետ ծանօթութիւնը. ծնրագրութեան համար, եկեղեցու դռները մտնելու և փարիսեցիական կեղծաւորութեան համար, ինչպէս երկիւղ է կրում՝ մեր միապետ թերթը: Ո՛չ երբէք: Մենք չենք ցանկանում անգիտակ կրօնամոլներ, ինչպէս և չենք ուղում անմիտ ազատամիտներ, քաւ լիցի: Աւետարանը պէտք է պատուաստելու մի միայն ճշմարիտ քրիստոնէութիւնը, մեղմելու մարդկանց վայրագ սիրտն ու կատաղութիւնը, արմատախիլ անելու կռուի և անմիաբանութեան հիւանդ վարդապետութիւնը և դուրս խլելու ժամանակակից թեթեամտութեան սերմանած սուտն ու կեղծիքը, որոնք ու տատասիլը այն շրջաններէ, որոնք կարծելով թէ գտել են ճշմարտութեան վերջին խօսքն ու փրկութեան ճանապարհը, լցուել են կատաղի տտելութեամբ և թշնամութեամբ դէպի հարազատ եղբայրները: Անուրանալի է, որ մարդիկ յառաջագիւժում են ընկնելով և կանգնելով, պարզ է, որ զարգանում է մեր ճաշակն ու պահանջը, որ այս ու այնտեղ առկայծում են մարդասիրութեան և հաւատարմութեան թոյլ նշանները: Բայց եթէ մենք համեմատելու լինինք մարդկանց սիրտն ու զգացմունքը կրթելու համար դուրձ դրած եռանդն ու միջոցները քրիստոնէութեան առաջին դարերի հետ և մի զուգահեռական անցկացնենք այն ժամանակուայ քրիստոնեայ համայնքի կեանքի և կենցաղավարութեան մէջ՝ մերի համեմատութեամբ, կը տեսնենք, որ ժամանակի և վատնած միջոցների համեմատ ոչ թէ չենք յառաջագիւժել, այլ գուցէ և յետադիմել ենք: «Այս է պատուէր իմ, զի սիրեսցիք զմիմեանս, որպէս և ես զձեզ սիրեցի: Մեծ ևս քան զայս սէր ոչ ոք ունի, եթէ զանձն իւր գիցէ ի վերայ բարեկամաց իւրոց: Դուք բարեկամք իմ էք, եթէ առնիցէք, զոր եսն պատուիրեմ ձեզ»: Ահա մարդկային կենցաղավարութեան այն միակ և ամենամեծ շաղախը, որի համար անհրաժեշտ է Աւետարանը և որը ծնունդ է առնում Աւետարանից: Ի՞նչպէս ենք հասկանում մենք սէր ասած բանը և գործադրում մեր կեանքում: Ո՞րչափ

է այլանդակուած այդ զգացմունքը մեր ժամանակ և մեզանում: Յաճախ, շատ յաճախ է գործածուում մեզանում այդ բառը, բայց անհիմն, այլանդակ և մարմնականացած՝ եռական դարձրած:

Մենք յաճախ ասում ենք, — ես սիրում եմ այս ինչ կերակուրը, այս ինչ գոյնի շորերը, այս ինչ մարդուն կամ կնոջը, զաւակներին կամ եղբօրը և ինչքան որ շորերն է կամ կերակուրն է տեղական, ճիշտ նոյն չափ կամ նրա համեմատ էլ ուժեղ և տեղական է լինում ոչ թէ մեր սէրը դէպի այդ իրերը կամ անձինք, այլ մեր ցանկութիւնները դէպի նոցա, մեր կարիքը այդ իրերն ունենալու, այդ անձերով շրջապատուած լինելու և նրանց գոյութեամբ մեր երջանկութիւնը կատարեալ անելու, իսկ այդ երբէք սէր չի կարելի կոչել: Եթէ մեր ցանկութիւնը տարածուում է դրանից հեռու, եթէ մենք ներողամիտ ենք և տանում ենք նաեւ այլ մարդկանց գոյութիւնն ու ներկայութիւնը, այդ էլ դարձեալ մեր կարիքների և մեր հաշիւների համար է: Մեր սիրոյ զգացմունքը դէպի իրերը, դէպի մարդիկ և նոյն իսկ դէպի հայրենիքը բղխում է անձնական հաշիւներից՝ մեր երջանկութիւնը կատարեալ անելու ցանկութեամբ: Բաւական է, որ փոխուի նրանց այն սովորական ձևն ու վարմունքը, որը մեր կարծիքով միակն էր մեր բազմաւորութեան լիակատարութեան համար և ահա մենք լցւում ենք այնպիսի ատելութեամբ, այնպէս վայրկենաբար մոռանում ենք մեր մի քանի օր առաջ արտասանած գեղեցիկ խօսքերը, որ իսկոյն ընդհատուում է գոյութիւն ունեցող թոյլ կապն անգամ և սկսում է ատելութիւն, ծեծ, բաժանումն եղբայներից և ծնողներից, ամուսնալուծութիւն, խռովութիւն և այլն: Վերցնենք նոյն իսկ մեր գաղափարական կարծուած համախմբումները, կուսակցութիւնները, որոնց ի մի համախմբողը դադարւարն է իբր թէ, որոնք ըստ Աւետարանի՝ բարեկամ պէտք է լինին իրար և դադարւարի ազբւրի: Շուք բարեկամք իմ էք՝ եթէ առնիցէք, զոր ես պատուիրեմ ձեզ: Ինչով են նրանք իրար հետ շաղկապուած:

ինչն է նրանց միացնողը: Դարձեալ ետը և նրա շահերը, իսկ սիրոյ զգացմունքը Աւետարանի մտքով կատարելապէս բացակայում է: Բաւական է, որ այդ ետը շօշափուի, բաւական է, որ նրա համար յանկարծ անախորժ մթնոլորդ ստեղծուի և դուք կը տեսնէք երեկուայ գաղափարականին, օրինականին, հայրենասիրին և մարդասիրին — գաղափարատեաց, անօրէն, դաւաճան և մարդատեաց: Թրինակներ՝ — օրքան կուզէք, և դուքս է գալիս, որ մեր սէրը ոչ այլ ինչ է, եթէ ոչ եսականութիւն և կիրք, և մենք ստրուկ ենք մեր կրքերի, օրովհետեւ մեր ամբողջ գործունէութիւնը ոչ թէ քրիստոնէական սիրոյ մէջն է, սիրոյ, որ մարդուս միակ խելացի գործունէութիւն է, ոչ, այլ եսի համար և նրա կրքերի շուրջը, իսկ հին, շատ յայտնի ճշմարտութիւն է, որ իւր կրքերի ստրուկը՝ ստրուկներից ամենաստորն է: Մենք՝ հոգեւորականներից սկսած մինչև վերջին աշխարհականը՝ շատ քիչ բացառութեամբ, մեր մեծագործածականների ու կոչումների ներքոյ էլ ամենաստորական և խայտառակ եսապաշտներ ենք, անմիաբան, անմարդասէր յանցաւորներ և մեր կրքերի կոյր և մոլորուած ստրուկներ:

Աւետարանի սէրը այդպիսի զգացմունք չէ, նա աշխարհից կտրուած և մի միայն երկինքն ուղղուած, գործից հեռու և սոսկ ազօթքների մէջ պարփակուող ու արտայայտուող զգացմունք չէ: Ընդհակառակն, այդ սէրը աւելի իրական, գործնական և կենսական է, քան մեր ամենաթունդ ընկերվարականութիւնն ու հայրենասիրութիւնը, քաղաքակրթութիւնն ու մարդասիրութիւնը: Այդ սէրը հաւատացողների կեանքն է և առանց նրա ոչ մի ժողովուրդ, ոչ մի ազգ նախանձելի կեանք չի կարող ունենալ:

Նա կեղծիք և հաշիւ չի ճանաչում, նա չի պահանջում, չի քննում, հրէայ, հեթանոս, օտար և բարեկամ չի տարբերում. նա տալիս է երկու շապկից մինը, տալիս չունեցողին, տալիս է առանց յետ պահանջելու պարտաւորութեան, տալիս է բոլորը և նոյն իսկ կեանքը: Նա

անյաղթելի է և միշտ յաղթող, նա ջերմութիւն է, ար-
ցունք արքող դժասիրտ ձեռքն է և ընկածի նեցուկը:
Նա յաղթեց հռովմայեցւոց բռնապետներին կրկէսների
կռուարեմից, նա յաղթեց մուեգնած մարդկանց—վիրա-
պից և խարոյկներից, ասնջանքի զարհուրելի գործիքների
տակից և խաչի վրայից: Այ՛ո, սէրն այն հզօր մագնիսն
է, որ ձգում է դէպ իրեն մարդկանց բրտացած և աշխարհի
հիւանդ վարդապետութեամբ խոպանացած սրտերը և ով
էլ լինի, ինչքան էլ լարուած ու լցուած լինի թշնամու-
թեամբ, կարճ է արդեօք չը ցնցուել Պլատօնի, Սոկրա-
տէսի սիրով, չը յաղթուել Փրկչի վեհագոյն և անսահման
մարդասիրութեամբ: Մարդիկ շատ հին ժամանակներից
ստեղծել են օգէնք և արդարադատութիւն, պատիժ և
աքսոր, ծեծ և կախազան — յանցաւորներին պատժելու և
չըջապատողներին ուղղելու համար. բայց կարճ են ցոյց
տալ գէթ մինի, որ այդպիսի միջոցներով ուղղուած և
փոխուած լինի: Երկար անօգուտ փորձերից յետոյ մար-
դիկ այժմ ձգտում են աշխատանքի վարժեցնելով ուղղել
յանցաւորներին, քրտինքով լուանալ տալ նրանց իրենց
սրտի ժանդը. բայց այդ դէպքումն էլ վերջնական ուղղիչը
սիրոյ զգացմունքն է. այ՛ո, մի միայն Աւետարանի ցոյց
տուած և ընդգծած սէրն է:

Վերջերս լոյս տեսաւ Դօրաշէնիչի յայտնի գիրքը «Սա-
խալին» վերնագրով, որը նա Ռուսաստանի ազգանոց է
կոչում. որովհետեւ այդ ընդարձակ երկիրը ինչ որ տե-
սանելի ծանր յանցաւոր է ունեցել հրապարակի վրայ,
այնտեղ է աքսորել, այդ կզղու վրայ է չալրտել ու փակել:
Երկար ժամանակ այնտեղ իշխել է մտրակն ու կախազանը,
տաժանակիր աշխատանքն ու բանտը և յարգելի հե-
ղինակը հազարաւոր փաստերով ապացուցանում է, որ
այդ միջոցներով ոչ ոք չի ուղղուել, ոչ մի մարդասպան
օրինաւոր մարդ չի դարձել: Մինչդեռ Հիւդօի Թշուառ-
ների հերոս Ժան-Վալթանը ուղղուած է և մարդասիրու-
թեան զինուոր դառնում շնորհիւ Միրիել Եպիսկոպոսի
հայրական սիրոյ և ներողամտութեան և այդ այն միջոցին,

երբ ժան-Վալթանը կողոպտելու համար էր մտել եպիսկոպոսի բնակարանը և արծաթեայ աշտանակները գողոնալով, ուղղով էր դուրս փախչել:

Բայց վերցրէք նոյն Դօրոշիկը, կարգացէք նրա գիւրքը և ուշադրութիւն դարձրէք օրիորդ Նասումովայի վրայ. կարողէք արտակարգ ջերմութիւն և սգեորութիւն չըզդարերբ իմանում էք, թէ ինչպէս Պետերբուրգի մայրաքաղաքային փափուկ կեանքի սովոր երիտասարդ օրիորդը՝ իւր երկու ընկերուհիների հետ՝ տառնեակ հազարաւոր վերստեր չափելով, դնում է Սախալին մի միայն այն նպատակով, որ աչքից հեռացած և մտքից մոռացուած, իրաւազուրկ և իբրեւ ժանտախտ՝ մարդկային քարէկիրթ հասարակութիւնից դուրս քշուած յանցաւորների զաւակներին համար մանկապարտէզ հիմնի, կրթի, դաստիարակի, մարդիկ՝ ափտանի անդամներ դարձնի պետութեան և հասարակութեան համար: Այ թէ ինչու է հարկաւոր մեզ՝ իրար դէմ՝ ատելութեամբ և կատաղութեամբ լցուածներին իսկ՝ Աւետարանը, այ թէ ինչը կարող է հակակշռել ատելութեան և անմիաբանութեան քարոզը: Իսկ Աւետարանը մեզ հարկաւոր է ըմբռնելու համար քրիստոնէական սիրոյ զգացմունքը, որը ոչնչով նման չէ մեր այլանդակած եռական ցանկութիւններին, որին սէր անունն ենք տալիս: Մենք, ինչպէս վերը յիշեցինք, սոյն յօդուածով երբէք ցանկութիւն չունինք պօկելու մարդկանց աշխարհից և դէպի երկինքն ուղղելու նրանց մտածմունքը. քաւ լիցի. Քրիստոսի ճշմարիտ աշակերտներն երբէք այդպիսի բան չեն պահանջել և այդպէս կարծողներին էլ շատ գեղեցիկ պատասխանել է Յովհաննէս աւետարանիչն իւր թղթի չորրորդ գլխում: «Ով որ տեսւմ է, ես սիրում եմ՝ Աստուծուն, իսկ իւր եղբօրն ատում է, ստում է նա, որովհետեւ իրեն տեսանելի եղբօր չը սիրողը, ինչպէս կարող է սիրել այն Աստծուն, որին չի տեսնում»: Մարդիկ սովորաբար կարծում են, որ իրենց կենցաղավարութեան համար օրէնք և նրա գիտութիւնն է հարկաւոր՝ նրանով գծած շրջանակը: Ուրիշ խօսքով՝ տարածութիւն առանց լոյսի,

միտք—առանց զգացման, լոյս առանց ջերմութեան, կամ մեքենայ, որը շարժւում է, բայց մեքենավար չունի, շոգենաւ, որ ղեկավար չունի։ Ո՛չ, «Լրումն ամենայն օրինաց սէր է»։ (Հռովմ. Թ. գլուխ ԺԳ—10) սէր աւետարանական, անձնազոհ սէր դէպի եղբայրն ու ընկերը։ Այդ զգացմունքից զուրկ մարդկանց շատ գեղեցիկ կերպով բնորոշել է Պօղոս առաքեալը Կորնթացոց ուղղած Ա. թղթի ԺԳ. գլխում։

«Եթէ անգամ հրեշտակների և մարդկանց լեզուով խօսելու լինիմ և սէր չունենամ, նշանակում է ես պղնձի նման մի բան եմ, որ հնչում է, կամ ծնծղայի նման, որ զոզանջում է։ Եթէ մարգարէութեան շնորհ ունենամ և գիտենամ բոլոր խորհուրդները և բոլոր գիտութիւնները, եթէ այնպիսի հաւատ ունենամ, որ լեռները տեղահան անել կարողանամ, բայց սէր չունենամ, ոչինչ եմ։ Սէր երկայնամիտ է, համբերող. նա քաղցրանում է, չի նախանձում, ամբարհաւած. հպարտ և յանդուգն չի լինում, չի գրգռւում, չար չի մտածում, անիրաւութեան վրայ չի ծիծաղում. այլ ուրախանում է ճրմարտութեան համար»։

Ահա այսպիսի սիրոյ զինուորութիւն է քրիստոնէութիւնը, այդ է պահանջում Աւետարանը, այդ զգաւմունքն է մարդու անմահացնում և մի միայն նրանով կարելի է թշնամիներին զինաթափ անել և մաքրել արատաւոր խորհուրդներից. այո՛, մի միայն սիրով, աւետարանական սիրով. իսկ ճշմարիտ հերոսը նա չէ, ով որ կոտորում է թշնամիներին, այլ նա, ով որ թշնամիներին բարեկամների է փոխարկում։ Զինուենք Աւետարանի սիրով և մեր թշնամիներն էլ բարեկամների կը փոխուին. իսկ մեր թշուառութիւնն ու արցունքը, նեղութիւնն ու տանջանքը տեղի կը տայ—ինչպէս խաւարը արևի օսկեշող ճառագայթներից և ձիւնը—գարնանային ջերմութիւնից։

Ս. Տ. Վ. Մ.